

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлис, Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Գալուստարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Գալուստարութիւնների համար վճարում են
Իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տ է լ է Ք օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոր շաղի վրա. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Ազգայնաց. Նամակ Խմբագրութեան. Ներքին
ուրբեր. — ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին
ուրբեր. — ՀԵՌԱԳԻՆՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒ
ԹԻՖԼԻՍ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Համառոտական
անալիտիկական ցուցանիշներ. — Հերթական
հարց Գերմանիայում:

ՆՈՐ ՇԱԳԻՎ ԿՐԱ

«Մշակի» երեկվայ համարում մենք ա-
պալիք, որ Պարսկաստանի սկսել է աւելի
սկսող շինումներ ունենալ Եւրոպայի հետ:
Հարաւում, Պարսից ծոցի կողմից, նա շը-
սկսողներ ունի զլիսաւորապէս անգլիացի-
ների, ինչպէս զերմանացիների և միւս եւ-
րոպական ազգութիւնների հետ, իսկ հիւ-
սիսում նա սկսող յարաբերութիւններ է
հաստատում Ռուսաստանի հետ:

Պարսկաստանի երկու նշանաւոր վար-
ական կենտրոնները, Թէհրանը և Թաւ-
րիզը, կապվել են Ռուսաստանի սահման-
ների հետ կանոնաւոր հաղորդակցու-
թեամբ: Թէհրանից դէպի Ենդէի տանող
խաւովին կապարկապէս յարմար մի ուղի
կը լինէր, եթէ միայն տեղափոխութեան
պայմանները լինէին աւելի նպաստաւոր,
փոխադրութեան սահմանները աւելի էժան:
Թաւրիզից մինչև Զուզա, 140 վերստ տա-
րածութեան վրա, շարժվում են բեղբա-
կան ընկերութեան կառքերը, որոնք կա-
րողութիւն են տալիս ճանապարհորդելու
եւրոպական ձևով:

Արդէն խոսվում է Թաւրիզի և Զու-
զայի մէջ շինվելիք երկաթուղու ծրագրի
մասին, և հետո չէ այն ժամանակը, երբ
Արարատական մայրաքաղաքը կը կապվի
մի երկրի հետ ընդհանուր երկաթուղիա-
կան գծով: Թաւրիզի երկաթուղին իր
կողմից առաջ կը բերէ նոր հարցեր հա-
ղորդակցութեան ցանցերը աւելի ընդար-
ձակելու և խտացնելու գիտումով: Այժ-
մանից արդէն կարելի է ասել, որ երկա-
թուղու գծերը պէտք է ուղղվեն դէպի

Թէհրան, դէպի Պարսից ծոցը և դէպի
Ուրմիա:

Մեր ընթերցողները գիտեն, որ Պարս-
կաստանի խոշոր առևտրական կենտրոննե-
րում բացվել են և օրրոտօրէ բացվում են
ռուս-պարսկական բանկեր, որոնք իրանց
վրա պաշտօն են վերցրել ոչ միայն փո-
խանակարներ տալով, այլ և կատարելու
փոխառու հիմնարկութիւնների դերը: Այդ
բանկերը նպատակ ունեն թէ կրեղիտ
տարու և թէ ռուս-պարսկական առևտրա-
կան յարաբերութիւնների զարգացման հա-
մար ուժեղ խթան լինելու:

Փորձը ցոյց տուեց, որ բանկերի հիմ-
նելը աջող մի քայլ էր Ռուսաստանի կող-
մից՝ անտեսական ազդեցութիւն ձեռք բե-
րելու Պարսկաստանի արդիւնաբերական
ապարէզում: Բանկերի գործողութիւն-
ները համակրութիւն են գտել առևտրա-
կան շրջաններում և զիւրացրել են դրա-
մական շրջանադարձութիւնը:

Եթէ աչքի առաջ ունենանք, որ Պարս-
կաստանի համար այժմ անհրաժեշտ են
այնպիսի պատրաստված կուլտուրական
գործողներ, որոնք կարող լինէին թէ նոր
հիմնարկութիւնների մէջ գործել և թէ
մի և նոյն ժամանակ լաւ տեղեակ լինէին
տեղական պահանջներին և հանգամանե-
րներին, մենք կը տեսնենք, որ պարսկա-
հայերի համար բացված է գործելու մի
արդիւնաւէտ ապարէզ:

Ինչ դեր կը կատարեն պարսկահայերը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐԱՐԱՆԻՑ

Այլուրեւակ դիւզ, ապրիլի 4-ին
եթէ կար մի փոքրիկ հաղորդակցութեան
ճանապարհ, որն այս յետ ընկած անկիւնը կա-
պում էր դրա աշխարհի հետ եւ նրա լծացած
կեանքի անշարժութեան մէջ փոքր կենդանու-
թիւն էր առաջ բերում, դա Ալեքսանդրօպո-
լիսեանն էր խճուղին էր, որ սակայն հիմա
խանգարված է: Սրանով էլ արդէն վերջանում

է Ապարանի միակ միջնորդութեան միջոցը, եւ
մոռացված այս գաւառը կրկին պէտք է դա-
տապարտվի այն վիճակին, ինչ որ էր նա դեռ
այդ խճուղին չեղած ժամանակ:

Չարմախի է. այն օրից, ինչ Պարսկաստա-
նի եւ Թաւրիզի հայ գաւառների գաղթական-
ները լցրեց այս դատարկ երկիրը եւ բնա-
կութիւն հաստատեց, այդ օրվանից մինչև այս
օր այդ ժողովուրդը դատապարտված է ճակա-
տագրական մի խիստ մոռացման ամենքի կող-
մից: 35—40-ի չափ դեղեր, մօտ 30 հազար
բնակիչներով, դեռ եւս չեն ունեցել մի ամե-
նահասարակ ծխական զարդոց անցած: Տգիտու-
թիւնը եւ անգրագիտութիւնը ընդհանրական է:
Ժողովուրդը ապրում է կատարեալ նահա-
պետական, խաւար գրութեան մէջ, եւ չա-
փազանցութիւն չի լինի, եթէ ասենք, որպէս
կիսավայրենի ցեղեր՝ դուրս չպրտված երկրա-
գնդի մի խուլ անկիւնում: Երկիրը ներկայա-
ցնում է սիգաւէտ, առողջարար եւ հովասուն
մի վայր, ոտոգված սառն եւ քաղցրահամ ջրե-
րով, սակայն կեանքի եւ ապրուստի մասին
ամենատարրական ճաշակ եւ գաղափար անգամ
չունեցող ժողովուրդի կողմից նրանց բնակավայ-
րերը ներկայացնում են ապականված, աղտոզու-
թիւններով լի մի մթնոլորտ, որի մէջ մարդիկ
ապրում են ինչպէս անասուններ: Առողջապա-
հական պայմանները կատարեալ պատիժ են:
մարդիկ ապրում են իրանց անասունների հետ
միասին, մարդու եւ անասունի կեանքի մէջ
չառ չնշմարտելի կապ: Բնակարաննե-
րը չոր քարից շինած թաց եւ խոնաւ խոռոչ-
ներ են իրանց անապիւն կոնաձեւ հողէ կոտու-
րներով, որոնք նմանում են հարկուրաւոր հրա-
րդկային բլրակների, ծածկված խիտ բուսա-
կանութեամբ տակ: Մարդ կաւանայ սարսուռով
է, երբ մտածում է, թէ այդ միացած հողէ ա-
նապիւն զանգուաճների մոլթ գրկում ապրում
են մարդիկ եւ եթէ մի գուցէ պատահի սուր-
երկրեայ մի փոքրիկ ցնցում, արդէն մարդկանց
իրանց ձեռքով շինած այդ սարսափելի հողա-
թմբերը բաւական են առաջ բերելու ամենա-
մեծ աղէտը:

Ակնյայտնի է, որ այդպիսի մի երկրում գա-
նազան տարափոխիկ հիւանդութիւնները, ցա-

ւերը առատ հող կունենան: Ինչ կը նշանակէ,
որ 35 հազարի չափ ժողովուրդ, ուր կան եւ գա-
նազան այլազգի բնակիչներ, չունենայ գոնէ մի
բժիշկ, մի հիւանդանոց, ուր կարողանային
բժշկութիւն գտնել դժբախտ հիւանդները: չը
կայ մի դեղատոն, որտեղից կարելի լինէր
սպեղանի վերցնել իրանց ցաւերն ամբողջու-
համար: Սրանց փոխարէն ամեն մի քայլափո-
խում լինն են հէքիտ-սափրիչներն ու տատմէր-
ները, որոնք մի կողմից էլ իրանք են նպաս-
տում մարդկանց այն աշխարհն անցնելուն:

Ինչպէ մինչև այսօր այդ գաւառը մոռացված
է մնում գրաւ աշխարհից, ինտելիգենտ, գաղա-
փարական մարդկանցից, նոյն-իսկ էջմիածնի
հոգեւորականութիւնից, հէնց իրան Ապարանի
հարազատ ժառանգներից:

Չը կայ բանիմաց հասարակութիւն մեր մէջ,
չը կայ ազատ մտածող մի անհատ անգամ, չը
կայ հոգեւորականութիւն, եղածը հոգեւորա-
կաններ չեն, այլ ողորմելի արարածներ, որոնք
գիտեն միմիայն լաւ խմել, եւ ֆարաշան մի
կողմ չպրտած, գոմի օդաներում օրը մթնա-
ցնել: Հոգեւորականներ կան, որոնք ժողովուրդի
մէջ պարապում են գրեացութեամբ եւ վախա-
ռութեամբ:

Չը կայ մամուլի ձայն, որը դեռ եւս գոյու-
թիւն չունի Ապարանի համար: Նրա առօրեայ
ցաւերը, հոգսերը մնում են խեղդված իր ճնշ-
չող մթնոլորտի մէջ: Կեղեքիչը կեղեքում է
անսիրտ վախառուն շահատակում, չարչիւն ու
խանութպանները յափշտակում, այս բոլորն
էլ միացրէք տարիների անընդհատ անբերրու-
թիւնը, եւ կարող էք երեւակայել չքաւորու-
թեան եւ աղքատութեան չափը:

Ժողովուրդը որքան տղէտ է, անբան, նոյն-
քան էլ վայրենի: Կոիւներ, սպանութիւններ
յաճախ են պատահում Ուր կայ ժողովուրդի հա-
մախմուր, այնտեղ էլ ծեծ ու կռիւ, հարսա-
նիքները, դրօսանքները, տօները անկարելի է
որ հարբած հասարակութեան կողմից չը փոխ-
վեն մարդասպանութիւնների եւ կոիւների ա-
պարէզի: Մէկը միւսի կենացը չը խմելու, կամ
թէ պարի հերթը ձեռք բերելու համար անցած
կոիւներ են տեղի ունենում: Անցեալները
Չամբու գիւղում մի երիտասարդ դաշնակ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ՏՆԱՅԵԱԳՈՐԾԱԿԱՆ ՑՈՒ- ՑԱՀԱՆԴԵՍԸ

Այլիցխանութում ընտելութեան ենթարկված գե-
ղացու մեծերի եւ նրանց առիթով ծագած վիճա-
րութիւնների արդիւնքն այն եղաւ, որ կայ-
ացան 90 որոշումներ, որոնք եւ ենթարկվե-
ցան մարտի 21-ի եւ 22-ի ընդհանուր ժողով-
ների վերջնական ընտելութեան ու հաստատու-
թեան: Չեմամբի հարցը ամենաւել առաջ բե-
րաւ սէկիւնների մէջ ջերմ եւ աղմկալից վիճա-
րութիւններ: Մի քանի անգամներ անհամա-
կրօնութեամբ վերաբերվեցին զէմսովների գոր-
ծունէութեան: Պրօֆէսոր Կուզմիւն-Կարապետի
Րայեփակի, իշխան Շախօվսկոյ, կոմս Գէյտէն
փաստերով հաստատեցին, թէ հրքան անհիմն
են զէմսովների գործունէութեան մասին տա-
րածված մեղադրանքները, թէ հրքան բեղմնա-
ւոր է այդ գործունէութիւնը: Բայց եթէ զէմս-
ովն չէ կարողանում տալ ցանկացած արդիւն-
ք՝ դրա պատճառն այն անկանոն վիճակն է,
որի մէջ նա գտնվում է այժմ: Եթէ զէմս-
ովն, առաջ պրօֆէսորը, չէ կարողանում կատա-
րել իր պարտականութիւնները, պատճառն այն
ընդհանուր անկեղծարար վիճակն է, որի մէջ
նա գտնվում է, եւ ոչ մի պալլիատիւ միջոց չէ
կարող կենդանացնել զէմսովային գործունէու-
թիւնը մինչև որ չը վերացվեն այն ընդհա-
նուր, արմատական պատճառները, որոնք սեղ-
մում են նրա աշխատութիւնը: Ասում են, որ
զէմսովայի գործունէութիւնը կարելի է բար-

ւորել, հաստատելով մանր զէմսովային միու-
թիւն: Երեւակայենք, որ մեզ կը տան այդ
հաստատութիւնը, պահպանելով սակայն բոլոր
միւս պայմանները, որոնց մէջ այժմ գտնվում
է զէմսովային ինչ կը ծագէ դրանից: Եթէ այժմ
խոշոր զէմսովային միութիւնը վստահութիւն
չէ վայելում, մանր միութիւնն էլ այդ վստա-
հութիւնը չի վայելի: Պէտք է ինքնագործու-
նէութիւն, պէտք է որ անձնական նախաձեռ-
նութիւնը աճէ: Բայց ինչպէս այդ ինքնագոր-
ծունէութիւնը կարող է արտայայտվել, այդ նա-
խաձեռնութիւնը կարող է աճել, երբ հասարա-
կական ինքնագործունէութիւնը վստահութիւն
չէ վայելում: Նոյնպէս եւ ժողովուրդական ինք-
նագործունէութիւնը չէ կարող արտայայտվել
այդպիսի անկանոն պայմանների մէջ: Որպե-
զի ժողովուրդական ինքնագործունէութիւնը կա-
րողանայ զարգանալ, հարկաւոր է փոխել ընդ-
հանուր պայմանները, հարկաւոր է անձնաւոր-
ութեան ազատ զարգացումը, մարմնական պա-
տիճների ջնջումը, լուսաւորութեան լայն տա-
րածումը, գիւղացու իրաւունքների հաստա-
րացումը միւս դասակարգերի հետ եւ առհա-
սարակ ճորտային կարգի մնացորդների անհե-
տացումը:

Կոմս Գէյտէն, ամփոփելով վիճարանութիւն-
ները, ասաց, որ զէմսովայի դէմ եղած ան-
վստահութիւնը միշտ զարմացրել է իրան:
զէմսովն հանդիսանում է ճամնապահպանու-
թեան հաստատութիւն, որովհետեւ նրա դե-
կալները խոշոր անշարժ սեփականութեան
ներկայացուցիչներն են եւ ոչ մանր, չարժա-
կան սեփականութեան ներկայացուցիչները:

Կայացրված 90 որոշումներից առաջ ենք բե-
րում ընդհանուր-անտեսական եւ սօցիալակա-
նաւորութիւն ունեցողներից մի քանիսը:

Յօդ. 6. Ցանկալի է գումարել համաժողով-
ների, ոչ միայն կենտրոնական, այլ եւ տեղա-
կան, չլրջանային կամ նահանգական տնայնա-
գործական արհեստների եւ նրանց կարիքների
ուսումնասիրութեան համար:

Յօդ. 7. Տնայնագործական արդիւնաբերու-
թեան զարգացումը եւ կատարելագործութիւնը
կարելի է ձեռք բերել անբացառաբար, երբ
հասարակական ինքնավարութեան հաստատու-
թիւնները եռանդուն մասնակցութիւն ունե-
նան: Այդ հաստատութիւնները կարող են տալ
բեղմնաւոր արդիւնք միայն այն ժամանակ, երբ
լինի լայն ընտրողական իրաւունք եւ հասարա-
կական ու դատաստանական կոնտրօլ: Միայն
այդ պայմանների մէջ կարող են էական օգնու-
թիւն ցոյց տալ եւ գաւառի աւելի մանր ինք-
նավար կառավարչութիւնները: Բայց դրանից
մանր զէմսովային ինքնավար միութիւնների
վերաբերմամբ, նրանց իրականացման եւ բեղմ-
նաւոր գործունէութեան իրեն հիմնական պայ-
ման՝ հանդիսանում է գիւղացիների լիակատար
եւ բազմակողմանի հաւասարեցումը միւս դա-
նաւորներին հետ, իրաւունքների վերաբերմամբ
ընդհանրապէս եւ մասնաւորապէս դատարանի
եւ վարչութեան վերաբերմամբ: Ազգաբնակու-
թեան մէջ արդիւնաբերական ողին եւ ինքնա-
գործունէութիւնը զարգացնելու համար հար-
կաւոր է ամենից առաջ անձնաւորութեան ա-
զատ զարգացումը, իսկ այդ նպատակին հա-
նելու համար անհրաժեշտ են—ա) լուսաւորու-
թեան լայն զարգացումը ընդհանուր ուսման
հիման վրա, բ) ապահովված իրաւական կարգ,
գ) հանրակրթական, տեխնիքական եւ արդիւ-
նաւորական դասակցութիւնների ազատ կազ-
մակերպութիւն:

Յօդ. 8. Ցանկալի է մտցնել զէմսովային ընդհա-

նուր դրութիւնը եւ հիւսիսա-արեւմտեան երկ-
րի ու հիւսիսային Կովկասի մէջ:

9. Ցանկալի է, որ կառավարութիւնը մշակէ
պետական օգնութեան մի ձեւ, որով կարելի
լինի օգնութեան հասնել տնայնագործներին
զէմսով ւնեցող նահանգներում: Թէեւ հա-
մաժողովը կարծում է, որ միայն զէմսովային
հաստատութիւնները կարող են էական օգնու-
թիւն հասցնել տնայնագործութեան եւ որ բիւ-
րօկարտիական հաստատութիւնները չեն կարող
բունել նրանց տեղը:

10 Համաժողովը որոշում է միջնորդել՝ հիմ-
նել պետական ժողովրդական բանկ, որի նպա-
տակը պէտք է լինի օգնել գիւղական եւ քա-
ղաքների ազգաբնակչութեան աշխատութեան,
գրամ փոխ տալով նրան:

11. Անհրաժեշտ է միջնորդել՝ կենդանացնել
մեր հիւսիսային արհեստների եւ զիպլօմատիական
ներկայացուցիչների գործունէութիւնը առև-
տրական կողմից:

12. Անհրաժեշտ է միջնորդել, որ զէմսովո-
ները, գիւղատնտեսական ընկերութիւնները ի-
րաւունք ստանան առանց մագիստրատ պող-
պատ, թուջ, երկաթի եւ կապար, ինչպէս եւ
այդ մետաղները մշակող գործիչները:

13. Համաժողովը հաստատում է, որ տնայ-
նագործական արդիւնաբերութիւնը ամեն կող-
մից զարգացնելու համար—եւ տեխնիքական,
եւ տնտեսական եւ զեղարուեստական կողմից—
անհրաժեշտ է չլուտով իրազորեւ ընդհանուր
սկզբնական ուսման ծրագիրը:

14) Ցանկալի է ստեղծել էժան պարբերական
օրգան մանր արդիւնաբերութեան ճիւղի մէջ
բոլոր գործիչներին միացնելու համար:

15) Անհրաժեշտ է, որ տնայնագործական ալ-

սպանել իր կնոջը, որովհետեւ նա համարձակվել էր իր կեսորդը խօսք դարձնելու Այսպիսի դէպքեր, ի հարկէ, ծնունդ են վերջին ծայր տղիտուութեան:

Հարկաւոր էր խղճալ այս ժողովրդի վրա, մտածել նրա դրութիւնը մի փոքր լաւացնելու մասին:

Մուշ

ՆԱՄԱԿ ԽՄԱՐԱԳՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, ապրիլի 20-ին

Կարգադով «Մշակ» 74 համարում Երեւանից, պ. Բ. Վ. ի թղթակցութիւնը քաղաքային ջրաբանների եւ ձիաբարձի կոնցեսիայի վերաբերմամբ եւ նկատեցի, որ պ. յօդուածագիրը հարցի իսկութիւնը թողնելով, խեղաթիւրել է ճշմարտութիւնը եւ զանազան ակնարկներ է արել իմ հասցէին: Ուստի, ճշմարտութիւնը երեւանի հանկու համար-խնդրում եմ մի անկիւն չտրոհել իմ ներկայ բացատրութեան:

1897 թվ. մայիսի 29-ին, ես մի յայտարարութեամբ դիմեցի Երեւանի քաղաքային վարչութեան, առաջարկելով իմ պայմանները եւ խնդրեցի ինձ տալ Երեւանի տրամվայի կոնցեսիան. բացի դրանից մի լրացուցիչ խնդիր էլ տուել եմ այդ մասին 1899 թվ.ին, համաձայն քաղաքային վարչութեան առաջարկութեան, հաստատ մնալով իմ առաջարկած պայմաններին: Բայց քաղաքային ինքնավարութեան ներկայ կարգադրութիւնը, քննելով իմ եւ ուրիշ շատերի խնդիրները, թողնում է առանց հետեւանքի, այն պատճառով որ բազմաթիւ մտադրութիւն ունի չինել տրամվայը եւ շահագործելը Անգլիոյ եւ բաւական ժամանակ, եւ քաղաքային վարչութիւնը, չը նայելով իր այդ կարգադրութեանը տրամվայի մասին՝ մտնում է բանակցութեան մէջ ինձի հետ: Բարձր է հետ, որ առաջարկում է իրան տալ թէ ջրի եւ թէ տրամվայի կոնցեսիան միասին: Գաղափար համաձայնում է պ. Բարձրի առաջարկութեանը եւ ընդունելով նրանից միայն չորս հազար ռուբլի գումարով երկու գործի համար՝ առաջարկում է սկզբնապայմանը ի հաստատութիւն Երեւանի նահանգական վարչութեանը: Երբ ես տեղեկացայ այդ մասին, մարտ ամսի 12-ին գրաւոր դիմեցի քաղաքային վարչութեանը եւ խնդրեցի ինձ տալ թէ ջրանցքի եւ թէ տրամվայի կոնցեսիան. որպէս զի գործը չը յետաձգվի նոր պայմանների երկար ու բարակ քննութեամբ: Ես ընդունեցի պ. Բարձրի առաջարկած պայմանները, որոնք նախապէս մշակված են քաղաքային վարչութեան մէջ, միեւնոյն ժամանակ առաջարկեցի յօդուածագիրը քաղաքի արդիւնքի 30%, փոխանակ Բարձրի առաջարկած 20%օր, եւ 6000 ռուբլի գումարով, փոխանակ 4000 ռուբլու, որ առաջարկել է պ. Բարձրը:

Գաղափարային վարչութիւնը մարտի 14-ի նիստում ինչ որ պատճառով, անհրաժեշտ դատաւելացնել գումարներ մինչեւ 20,000 ռուբլի, եւ էլ տուեցի իմ գրաւոր համաձայնութիւնը, խնդրելով միայն ժամանակ տալ մնացած 14,000 ռուբլին ներկայացնելու, այն է մինչեւ հետեւեալ հերթական նիստը, որ օրէնքի համաձայն կանխավճար էր ներկայ ապրիլի 8-ին: Բայց քաղաքական վարչութիւնը, չը բաւականանալով իմ տուած գումար յայտարարութեամբ, պահանջեց ինձից առանձին ստորագրութիւն լրացու-

ցիչ գրաւականը ներկայացնելու մասին որոշեալ ժամանակին: Իսկ ես, նկատելով այդ տեսակ անհաւատարմութիւն դէպքի իմ գրաւոր յայտարարութիւնը, ինքնավարութիւնից զրկված մերժեցի կատարել այդ անտեղի պահանջը: Որովհետեւ ես պիտի գործ ունենամ մի ամբողջ քաղաքային վարչութեան հետ եւ պայմանաւորվելով անազին գումարներ ծախսել թէ տրամվայի եւ թէ ջրանցքի շինութեան համար, իսկ այդ հիմնարկութիւնը, փոխանակ համարաչափ գործելու ինձ հետ, մի անմեղ խնդիրս անգամ չէ յարգում: Ժամանակ տալ 10 օրվայ ընթացքում ներկայացնել լրացուցիչ գրաւականը՝ չը նայելով, որ իր տրամադրութեան տակ ունի արդէն իմ 6000 ռուբլին, որն համար էլ ես չը կարողացայ վստահ լինել այդ վարչութեան վրա, որի կողմից ակնհերեւ էր անհաւատարմութիւնը դէպքի ինձ:

Չը նայելով պ. Բարձրի մարտի 12-ին տուած լրացուցիչ յայտարարութեանը, որը քննվեց դատարանում մարտի 14-ին իմ տուած յայտարարութեան հետ միասին՝ քաղաքային վարչութիւնը աչքի առաջ ունենալով իբր թէ պ. Բարձրի հետ պայմանները արդէն վերացած են եւ երկու կրկնով ներկայանալով պատասխանատւութիւնից, որոշեց քաղաքական տեսակետից իմ խնդրը թողնել առանց հետեւանքի եւ վերադարձնել ինձ 6000 ռ. գումարով: Եթէ քաղաքային վարչութիւնը որ եւ է պատճառով հաստատեց էր, որ ես ժամանակին լրացուցիչ գումարներ չեմ ներկայացնելու, ուրեմն աւելի լաւ կը լինէր սպասել մինչեւ որոշեալ ժամանակ, եւ եթէ չը ներկայացնէի՝ թողնել քաղաքի օգտին արդէն առաջարկած 6000 ռ. եւ ոչ թէ հաւատ չընծայել իմ գրաւոր յայտարարութեան եւ պահանջել անտեղի ստորագրութիւն:

Այս պ. պ. ընթերցողներ, դուք դատեցէ՛ք: Պարզ յայտնի է, որ պ. Բարձրի հետ զեռ պայման չէ կապված, իսկ նրա առաջարկած պայմանները միայն քննվում են նահանգական վարչութեան մէջ, ուրեմն եւ ոչ մի պատասխանատւութիւն քաղաքի կողմից պ. Բարձրի վերաբերմամբ չէ կարող տեղի ունենալ օրէնքի տեսակետից. իսկ իմ կարծիքով շատ մեծ հանձար չէ հարկաւոր, որ գործի այս տեսակ դրութեան մէջ հասկանայ, թէ ինչ առաւելութիւններ ունեն իմ առաջարկած պայմանները:

Եսայի Բ. Զանփօղաբեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Պարսկաստանի առաջնորդ Եղիշէ վարդապետ Մուրադեան եկաւ Թիֆլիս եւ ուղեւորվեց դէպի Բագու ներկայանալու Պարսից Շահին:

Նաւթային վաճառանոցը սկսել է փոքր ինչ կենդանանալ: Նաւթը ծախվում է 7—7½ կօպէկով: Կերոսին գները շատ ցածր են, ուստի կերոսին գործարանները դեռ չեն վերսկսել իրանց դադարեցրած գործունէութիւնը: Ծանր նաւթը ծախվում է բարձր գնով: Չորս հինգ ամսով ծախողները վաճառել են նաւթ նաւեւ 8 կօպէկով:

որով կարող է լայն կերպով զարգանալ տնայնագործական արդիւնաբերութիւնը: Համաժողովում չօջափվեցին եւ մի քանի հարցեր, որոնք դուրս էին նրա ծրարքից, եւ նախագահը ստիպված էր թողնել չը տալ իր նախագահական իշխանութեանը, որ նրանք մտնելին համաժողովի վերջնական որոշումների մէջ. բայց այդ տեսակ հարցերի արժարժութիւնը չէ զարմացնում ինձ, առհասարակ դժուար է սեղմել կեանքը որեւէ որոշ չընթանակի մէջ: (Բուռն ծափահարութիւններ):

Ընդհանրապէս, համառուական I տնայնագործական համաժողովը լաւ տպաւորութիւն թողեց եւ մինչեւ այժմ եւս հասարակութեան եւ մամուլի քննութեան ու խորհրդածութեան առարկայ է մնում: Անկասկած, նրա գործունէութիւնը բեղմնաւոր եւ օգտակար եղաւ:

Հ. Առաքելեան

ՀԵՐԹԱԿԱՆ ՀԱՐՑ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ

Հայացիք, ապրիլի 29-ին

Մի տարուց աւելի է, որ գերմանական մամուլը, բայցստացը եւ ժողովրդական բոլոր դասակարգերը լարված կերպով զբաղված են մաքրային սակագների հարցով, որի բարեջանող լուծումից է կախված գերմանական ազգի մեծամասնութեան, մանաւանդ նրա աղքատ եւ բանւորական դասակարգերի բարելաւ դրութիւնը եւ Գերմանիայի քաղաքական խաղաղ յարաբերութիւնը առհասարակ այն բոլոր պետութիւնների եւ ազգերի վերաբերմամբ, որոնց հետ Գերմանիան քաղաքական, առեւտրական եւ տնտեսական յարաբերութեան մէջ է գտնւում: Չափազանցութիւն չի լինի, եթէ ասենք,

Թիֆլիսի քաղաքային դուման, իր վերջին նիստում, երկար վիճաբանութիւններից յետոյ, որոնց ներկայացնել նահանգական իշխանութեան հաստատութեանը՝ վարչութեան անդամի պաշտօնի համար ընտրված երեք թեկնածուներից միայն ընտրվել Ստեփանեանին, որ ամենքից աւելի սպիտակ քուէ է ստացել:

Երեկ, ապրիլի 24-ին, լրացաւ Թիֆլիսի համալսելի հիմնարկութիւններից մէկի, կենդանի-ներին հովանաւորող ընկերութեան բանեւէինդամայն գոյութեան տարեդարձը: Ընկերութեան կանոնադրութեան հաստատված է կառավարութեան կողմից 1877 թվ. ապրիլի 24-ին: Իր գոյութեան երկար տարիների ընթացքում ընկերութիւնը հանդիպել է շատ դժուարութիւնների. եղել են տարիներ, երբ նա ունեցել է շատ սահմանափակ թւով անդամներ եւ նոյն իսկ, միջոցների սղութեան եւ համակողմների պակասութեան պատճառով, մօտ է եղել փակված մնալ: Ասկայն ի պատիւ ընկերութեան ղեկավարների պէտք է ասել, որ նրանք չեն վնասվել ժամանակաւոր դժուարութիւններից, եւ վերջին տարիների ընթացքում ընկերութեան միջոցները այնքան բազմապատկել են, որ նա ձեռնարկել է չինել սեփական տուն Թիֆլիսի Պետիկ կոչված թաղում, ուր պէտք է զետեղվի ընկերութեան բուժարանը, որ մեծ ծառայութիւն է մատուցանում տեղական ազգաբնակչութեան, որպէս անասունների միակ բուժարան:

«Рус. Вѣд.» լրագրի հաղորդում է, որ ապրիլի 30-ին Մոսկովայի Պատմական Թանգարանի դահլիճում կայացաւ Եւրոպայի ազգագրական կոնգրեսը: Եւրոպայի մէջ մենք ի միջի այլոց տեսնում ենք 3 հայերէն, 3 վրացերէն երգեր: Մասնակցողների մէջ է հայ երգիչ Լ. Ներսիսեանը:

Մօտ օրերում Պետերբուրգ կը հանեն Փերմանական խոշոր գրամատերերի ներկայում ունեցիներ, որոնք սինդիկատ են կազմել՝ նպատակ ունենալով նաւթային ձեռնարկութիւններ գնել: Կովկասում Սկզբում Փերմանական սինդիկատը մտադիր է գնել երկու պարսիկ միլիոնատերերի նաւթահանքերը:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ մի քանի անգամ կրկնված միջնորդութիւններից յետոյ՝ Բերլինի տեղեկատու գրասենյակներից մէկին վերջապէս անդովեց իրաւունք ստանալ՝ բանաւոր Ռուսաստանի զանազան քաղաքներում բաժանմունքներ, որոնք պէտք է տեղեկութիւններ ժողովին, թէ առեւտրական աշխարհում յայտնի այս կամ այն անձնաւորութիւնը որքան վտանգելի է կրեդիտի կողմից: Բերլինի գրասենյակն իր առաջին բաժանմունքը կը բանալ Վարշավայում եւ ապա հետզհետէ Կիւվում, Պետերբուրգում, Մոսկովայում, Օդես-

սի Գերմանիայում այժմ չը կայ մի թերթ, որի իւրաքանչիւր համարում գտնէ թերթի կերպով խօսք չը լինի Գերմանիայի մաքրային սակագների վերաբերմամբ, որի վերջնական ձեւակերպումն արդէն յանձնված է Ենդիմալկար որ մարդկանցից բաղկացած մի յանձնաժողովի: Հասարակական գիտակցական կարծիքը այնպիսի մեծ դեր խաղաց եւ զգալի ազդեցութիւն ունեցաւ Գերմանիայի մաքրային քաղաքականութեան վերաբերմամբ, որ կառավարութիւնը վերջ ի վերջոյ ստիպված եղաւ այդ կարծիքի իրաւունքը ճանաչել եւ մաքրային հարցին չը տալ այնպիսի սուր կերպարանք, ինչպիսին նա մշտադիր էր այդ հարցի արժարժման սկզբնական շրջանում, ի նկատի ունենալով միայն գերմանական մեծ կալուածատէրերի՝ ազգաբնակչի շահերը ի վնաս ժողովրդական: Միւս դասակարգերի Կառավարութիւնը այժմ եկել է այն համոզմունքին, որ մաքրային սակագների հարցում պէտք է որոշ կօմպրոմիսներ անել յօդուած գերմանական ազգի մեծամասնութեան:

Մեծ եւ կենսական նշանակութիւն ունի այդ հարցը, որովհետեւ դրանից է կախված Գերմանիայի տնտեսական եւ մասամբ քաղաքական ապագայ գրութիւնը: Հակահայտնի է ուրեմն այն սարսափելի կոխը, որ այժմ սկսվել է այսպէս կոչված ազգագրական հին Գերմանիայի եւ ինդուստրիական նոր Գերմանիայի մէջ: Արդե՞ք պէտք է զարկ տալ Գերմանիայում գիւղատնտեսութեան, թէ ինդուստրիայի զարգացման: Որի զարգացումը օգտակար է Գերմանիայի ազգաբնակչութեան մեծամասնութեան շահերի համար: Այս հարցի ճիշտ լուծարմանը թեան համար ամենահեղինակաւոր եւ ձեռնհաս մարդիկ գերմանական քաղաքատնտեսներն են, որոնք նոյնպէս երկու միմեանց հակառակ բա-

սայում, Թիֆլիսում եւ մի քանի ուրիշ խոշոր առեւտրական կենտրոններում:

Ռուսաց լրագիրները հաղորդում են, որ Վարշավայի երկաթուղու վարչութիւնը մտադրութիւն ունի կարճ ժամանակից յետոյ ձեռնամուկ լինել մի առանձին գլխի շինելու ինչ-մազ կայարանից դէպի Դուբաւ:

ԷՏՄԻԱՄԵՆԻԾ մեզ գրում են. «Ներկայումս այստեղ է գտնվում Ամասիայի յաջորդ Արթուր տակէս վարդապետ Վանքեանը: Մօտիկ ժամանակում եպիսկոպոս ձեռնադրվելով, նա պէտք է ուղեւորվի իր տեղը առաջնորդութեան պաշտօնով»:

ԵՐԵՎԱՆԻԾ մեզ գրում են. «Ապրիլի սկզբից մեզանում տեղի ունեն անձրեւային եւ սուր փոփոխական եղանակներ: Որքան էլ անձրեւները կարեւոր են մանաւանդ այս տարվայ պէս մեղմ եւ սաւառածին ձմեռ ունեցող տարում, բայց եւ այնպէս, ինչպէս Կովկասի շատ կողմերում, այնպէս, ինչպէս մեզանում ապրիլի 8—12-ին տեղի ունեցան զգալի ցրտեր, որոնք բաւականաչափ վնասներ հասցրին այգիներին: Երեւանի այգիները տեղ-տեղ վնասվել են շատ եւ տեղ-տեղ քիչ չափով: Եթեմանի գաւառում նոյնպէս չօջափելի վնաս են կրել այգիները. իսկ Գիւմրի-Բաղարի չրջանում, ինչպէս պատմում են, բոլորովին ցրտահար են եղել այգիները: Այսպիսով Երեւանի չրջանը անցեալ տարվայ անբերրութեան նշաններ տուեց գինեգործութեան նկատմամբ, մի բերք, որ կաղմում է ազգաբնակչութեան մի որոշ չրջանի միակ տնտեսական աղբիւրը»:

ԹԵՂԱՅԻՆԻԾ մեզ գրում են. «Ներկայումս, զարմանալի տաք եւ յուսատու եղանակից յետոյ, ապրիլի 5-ին յանկարծ սկսեց փչել ցուրտ արեւելեան քամի, որին յաջորդեց ձիւնախան անձրեւը: Հանդիստ քնեցինք, եւ թաղերով, որ առաւօտեան կը հանդիպեցը կրկին զարմանալի եղանակին: Բայց մենք չարաչար սխալվեցինք մեր հայրենիքի մէջ: Դրա փոխարէն տեսանք ամբողջ Կախէթը սպիտակ սաւանով ծածկած: Բայց որովհետեւ ամբողջ 3 գիշեր երկինքը ամպամած էր՝ կարծում էինք, որ կրիզիսը անցել է: Բայց, աւագ, չարանակվող ձիւնին—երբ ծառերը եւ վազերը դեռ եւս թաց էին եւ ձիւնով ծածկված—յաջորդեց ցուրտ եւ պարզ գիշերը: Առաւօտեան, ապրիլի 8-ին, ոչ միայն գետինն էր սառած, այլ եւ ծառերը եւ վազերը խանձված եւ սառուցով պատած: Եւ այդպէս մեր ապագայ յոյժը երեք օրվայ ընթացքում օդը ցնդվեց: Առաւելագուէ վնասվեցին քնեցող ծառերը—նշենի, ծիրանի, զեղձների եւ այն եւ նորատունկ ու ծաղկած վազերը»:

Նախերի են բաժանվել Առաջին բանակի կամ ազգաբնական սխտեմի ամենանշանաւոր ներկայացուցիչը Բերլինի համալսարանի քաղաքատնտեսական Ա. Վազնէն է, իսկ երկրորդ բանակի կամ ինդուստրիական սխտեմի գիտնական պաշտպանը Միւնխենի համալսարանի հոգաւոր քաղաքատնտես Լ. Բրենտանոն: Երկուսն էլ միմեանց հետ համաձայն են այն կէտում, որ սօցիալական ընթացքը եւ Գերմանիայի տնտեսական ոյժը շատ կարեւոր են համարում: Վազնէնը պտտականում է սօցիալ-պահպանողական, իսկ Բրենտանոն սօցիալ-ազատամիտ ուղիւն: Առաջին ուսուցչապետը իր գիտնական կարծիքը ազգաբնական սխտեմի մասին ժամանաւորապէս զետեղել է իր «Agrar und Industriestaat» (ազգաբնական եւ ինդուստրիական տէրութիւն) վերնագրով աշխատութեան մէջ: Իսկ Բրենտանոն իր «Die Schrecken des unbewiegenden Industriestaates» (գերակող ինդուստրիական պետութեան սարսափները) վերնագրով աշխատութեան մէջ: Չը նայելով տնտեսական համար գիտնական նշանաւոր հեղինակութիւններից մէկն է համարվում, որ նրա ազգաբնական սխտեմի եւ մաքրային սակագնի համար բերած հիմունքները լուրջ քննադատութեան չեն դիմանում, եւ այդ տեսակետից Բրենտանոն աւելի լաւ եւ գիտնական հիմքեր է բերում իր սխտեմը պաշտպանելու համար: Օրինակ, խօսելով արտասահմանից Գերմանիայի ներմուծվող ազգաբնակչության համար բերած նշանակելու օգտակարութեան մասին, Վազնէնը այդ բանը արդարացիութեան նշանով, որ պետութիւնը արտասահմանեան հացահատիկների համար նշանակած մաքսերը

